ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2019թ. թիվ 655-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ «ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2019 թվականի փետրվարի 21-ի թիվ 62-Ա որոշմամբ հաստատված «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման» ծրագրերի՝ ըստ համայնքների ֆինանսական միջոցների բաշխման, ծրագրերի ուղղվածության, ծրագրերի ներկայացման ժամկետների ժամանակացույցը, հաշվի առնելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 07.11.2019թ. ԶԲ/ԶՊԳՌԱ-6/23650 գրությունը, ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի 21.11.2019թ. թիվ 10 նիստի արձանագրությունը և թիվ 7 որոշումը /կցվում են/՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Սպիտակի տարածաշրջանի «Սպիտակ համայնքի ճանապարհների հարակից տարածքների բարեկարգման օժանդակ աշխատանքներ» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

21.11.2019

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. նոյեմբերի 21
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2019թ. նոյեմբերի 21-ի
թիվ 655-Ա որոշման

	Պատվիրատուն և ծրագրի անվանումը	Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը	Աշխատանքի ծավալը, մարդ/օր	Նախատեսված ֆինանսավորման ծավալը /ՀՀ դրամ/	Ծրագրի պատվիրատուի կողմից կատարվող ներդրումների ծավալը /ՀՀ դրամ/	Աշխատանքի սկիզբ, ավարտ
1.	Սպիտակի համայնքապետարան, «Սպիտակ համայնքի ճանապարհների հարակից տարածքների բարեկարգման օժանդակ աշխատանքներ»	8	120	600.000	153.000	25.11.2019թ., 12.12.2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

11/21/2019

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ